

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/

«ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձինք**

«Վիճակագրության պետական խորհրդի անդամ՝ Ն. Բաղդասարյան

- **Երկիր/քաղաք/ժամկետ**

Շվեյցարիա, Ժնև 02.10 – 04.10.2018թ.

- **Նպատակը**

ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված կլիմայի փոփոխության վիճակագրություն արտադրողների և օգտագործողների համար փորձագիտական համաժողով

- **Քննարկված թեմաները**

Կլիմայի փոփոխության վիճակագրություն արտադրողների և օգտագործողների համար փորձագիտական համաժողովում ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ թեմաները.

- կլիմայի փոփոխության ցուցանիշների գլոբալ համացանկը,
- ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի աշխատանքային խմբի առաջընթացի զեկույցը կլիմայի փոփոխության վիճակագրության և դրա ցուցանիշների վերաբերյալ,
- կայուն զարգացման նպատակների ցուցանիշների ներդաշնակեցման գործընթացը բնապահպանական տնտեսական հաշիվների համակարգին և որքանով են դրանք կիրառելի կլիմայի փոփոխության վիճակագրությունում,
- առողջության վրա կլիմայի փոփոխության ազդեցությունը և դրա չափման գործիքակազմը,
- կլիմայի փոփոխության նվազեցման և հարմարվողականության վերաբերյալ վիճակագրություն,
- ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի գործընթացներն ազգային ցուցանիշների տեսանկյունից և դրանց կապը կայուն զարգացման նպատակների և Սենդայի կոնվենցիայի ցուցանիշների հետ,
- «Կոպենհեյկում կլիմայի փոփոխության ծառայության» ընթացիկ և նախատեսվող միջոցառումները և «Եվրոպայի կլիմայի վիճակը, 2017» զեկույցը,
- Եվրամիության հարմարվողականության ռազմավարության գնահատման արդյունքները,
- Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության միջոցառումները կլիմայի փոփոխության հարմարվողականության և աղետների ռիսկի նվազեցման գործընթացներում,
- արտակարգ իրավիճակների և աղետների վիճակագրության վարում և զարգացում,
- աշխարհատարածական տվյալների և երկրատեղեկատվական դիտարկումների կիրառելիությունը կլիմայի փոփոխության վիճակագրությունում,

- հետագա գործողությունները, որոնք հնարավորինս կնպաստեն կլիմայի փոփոխության և արտակարգ իրավիճակների ցուցանիշների հավաքագրման գործընթացում երկրների հաշվետվողականության, ինչպես նաև տվյալների համադրելիության ապահովմանը,
- համագործակցության հետագա ուղղությունները և ակնկալվող արդյունքները:

Աշխատանքային հանդիպման երեք օրերի ընթացքում նիստերն ընթացել են բուռն քննարկումներով, հետաքրքիր ներկայացումներով:

▪ Արդյունքները

Հանդիպման առաջին օրը ներկայացվեց 2015-2030թթ. աղետների ռիսկերի նվազեցման Սենդայի շրջանակային կոնվենցիան, դրա չորս առաջնահերթությունները: Ներկայացվեց Սենդայի մոնիթորինգի ցուցանիշները, դրանց կապը կայուն զարգացման նպատակների հետ, երկրների հաշվետվողականությունը և ցուցանիշների անընդհատությունը: Կարևորվեց ազգային վիճակագրական ծառայությունների դերը Սենդայի մոնիթորինգի համակարգում և նշվեց, որ նրանք պետք է անպայման ընդգրկված լինեն մոնիթորինգի գործընթացում: Մարդկային կորուստների մասով տվյալները պետք է լինեն դեգագրեցացված՝ ըստ սեռի, տարիքի, հաշմանդամության և այլն:

Ներկայացվեց Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության գործունեությունը, նրա կողմից հաշվառվող կլիմայի փոփոխության ցուցանիշները: Առկա է ցուցանիշների երեք խմբեր, որոնք ներառում են հիսուն ցուցանիշներ, սակայն դրանցից վեց-յոթն են համարվում հիմնական: Նշվեց, որ շատ կարևոր ցուցանիշ է ջերմոցային գազերի կոնցենտրացիան մթնոլորտային օդում, սակայն այն չկա ցուցանիշների ցանկում, ինչպես նաև կարևորվեց մահացության ցուցանիշը և աղետներից հասցված վնասը: Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպությունն անընդհատ հետևում է կլիմայի փոփոխությանը: Մանրամասնորեն ներկայացվեց կլիմայի փոփոխությանը վերաբերող վիճակագրական տվյալների և ցուցանիշների հավաքագրման գործընթացը: Կլիմայի փոփոխությանը վերաբերող ցուցանիշների որոշման համար ստեղծվել է նպատակային խումբ, որը 2014-2017թթ. մշակել է 39 ցուցանիշներ, որոնք կապված են կայուն զարգացման նպատակների հետ: Այժմ մշակվել են նոր լրացուցիչ ցուցանիշներ, պետք է զարգացնել քաղաքականությունները ռեգիոնալ և ազգային մակարդակներում: Պետք է ամրապնդել վիճակագրություն և քաղաքականություն իրականացնողների համագործակցությունը: Նշվեց, որ ամեն երկիր ունի ազգային հաշիվների համակարգ, բայց չունեն էկոլոգիայի հետ կապը, այսինքն չկա էկոլոգիայի և էկոնոմիկայի փոխկապակցվածությունը և դրանց ինտեգրումը:

Հանդիպման երկրորդ օրը համաշխարհային օդերևութաբանական կազմակերպությունը ներկայացրեց կլիմայի համակարգի համար կատարած գնահատումն ու վերլուծությունը, այն է՝ ինչպես է կլիմայի փոփոխությունն ազդում շրջակա միջավայրի վրա: 2017թ. կազմել են հաշվետվություն կլիմայի փոփոխության վերաբերյալ: 2013-2017թթ. օվկիանոսի ջերմաստիճանը բարձրացել է 1 աստիճանով, իսկ 2017թ.՝ 1.1 աստիճանով: 1993-2004թթ. ծովի մակարդակը նորմայից բարձր է եղել 2.7 մմ-ով, իսկ այժմ՝ 3.4 մմ-ով: 2016թ. գեկույց է պատրաստվել, ըստ որի աղետների 65%-ն ազդել է կլիմայի փոփոխության վրա: Տեղումների վերաբերյալ տվյալներ չկան: Տեղումները շատ փոփոխական են և չկա

ստանդարտ փոփոխական, որով կորոշեն կլիմայի փոփոխությունը, իսկ ջերմաստիճանի համար օգտագործում են միջին ջերմաստիճանների շեղումները 1961-1990թթ. նորմայից:

Շատ կարևորվեց կլիմայի փոփոխության նվազեցման և հարմարվողականության վերաբերյալ վիճակագրությունը: Վիճակագրական ծառայությունների միայն 7%-ն է հավաքագրում տեղեկատվություն հարմարվողականության վերաբերյալ: Ներկայացվեց հարմարվողականության ցուցանիշները և դրանց կապը կայուն զարգացման նպատակների և Սենդայի շրջանակային կոնվենցիայի ցուցանիշների հետ: 2013թ. Եվրամիության հարմարվողականության ռազմավարություն է մշակվել: Երեք հիմնական ուղղություն կա: 2018թ. հոկտեմբերի վերջին կլիմայի Եվրոպայի հարմարվողականության գնահատումը: Եվրամիության 28 երկրներից 26-ն ունեն հարմարվողականության ռազմավարություն: 7755 քաղաքապետեր ստորագրել են պայմանագիր կլիմայի և էներգիայի ցուցանիշների հաշվարկման վերաբերյալ: Կան կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրեր տարբեր ոլորտների համար: Նոր պահանջներ են առաջ եկել: Ֆինանսական և մասնավոր հատվածի ներդրումներն այս ոլորտում շատ կարևոր են: Այժմ Եվրամիությունը փոփոխում է մի քանի ստանդարտներ: Կարևորվեց ազգային վիճակագրական ծառայությունների դերը էքստրեմալ եղանակային երևույթների և աղետների չափման մեջ: Ազգային վիճակագրական ծառայությունները կարող են ունենալ կարևոր դերակատարում ռիսկերի նվազեցման գործում: Տրվել են ցուցանիշների սահմանումները: Հիմք է ընդունվել երեք կարևոր կենտրոնական քաղաքականություններ՝ Սենդայի շրջանակային կոնվենցիան, Օրակարգ 2030-ը և Փարիզի համաձայնագիրը: Ազգային վիճակագրական ծառայությունների կողմից օգտագործվում են տվյալների բազաները, մարդահամարները, տնային տնտեսությունների հետազոտությունների տվյալները, վարչական ռեգիստրների տվյալները և այլն: Վիճակագրական համակարգը մշակում է օրենսդրություն, ենթակառուցվածքներ և այլն: Ազգային վիճակագրական ծառայությունները պետք է կազմեն ազգային ճանապարհային քարտեզը:

Մանրամասնորեն ներկայացվեց «Կոպենհեյկուս կլիմայի փոփոխության ծառայության» ընթացիկ և նախատեսվող միջոցառումները: Հրապարակում են կլիմայի ամսական բյուլետեն: Բավականին շատ տվյալներ կան, դրանք բաց են, բոլորը կարող են օգտվել: Եղանակի կանխատեսում են կատարում: Կան տվյալներ ջրի, օդի, գյուղատնտեսության, տուրիզմի և այլնի մասին: Շատ մեծ տվյալների բազա է և անվճար: Կան շատ տեսանյութեր տարբեր թեմաներով: Հրապարակել են նաև «Եվրոպայի կլիմայի վիճակը, 2017» զեկույցը:

Հանդիպման երրորդ օրը երկրները ներկայացրեցին իրենց կատարած աշխատանքները կլիմայի փոփոխության ոլորտում: Հայաստանը ներկայացրեց կլիմայի փոփոխության վիճակագրության ճանապարհային քարտեզը: Նշվեց, որ ունեցել ենք ջերմոցային գազերի կադաստր, կլիմայի փոփոխության վիճակագրական տվյալներ, սակայն ճանապարհային քարտեզ չենք ունեցել: Ներկայացվեց վիճակագրական կոմիտեի դերը ճանապարհային քարտեզում: Այստեղ մեծ դեր ունեն նաև վարչական ռեգիստրները: Ներկայացվեց ինը առաջնահերթությունները: Պետք է կազմվեն էկոլոգիական հաշիվներ: Կարևորվեց էկոպորտալի ստեղծումն ըստ էկոլոգիայի առանձին ճյուղերի: Շատ կարևոր է վիճակագիրների և վարչական ռեգիստրների համագործակցությունը:

Համաժողովի վերջում ներկայացվեցին եզրահանգումները, հիմնական արդյունքները, առաջարկությունները և քննարկվեցին հետագա քայլերը:

Համաժողովը մեծ հնարավորություն ընձեռեց զարգացնել կլիմայի փոփոխության և արտակարգ իրավիճակների վերաբերյալ պաշտոնական վիճակագրությունը, ինչպես նաև ապահովել երկրի հաշվետվողականությունը և միջազգային համաձայնագրերում ամրագրված դրույթների իրականացումը, մասնավորապես ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի, Սենդայի կոնվենցիայի և Կայուն զարգացման նպատակների «Օրակարգ 2030-ի» պահանջները:

Համաժողովը հնարավորություն ընձեռեց նաև ձևավորել մի հարթակ կլիմայի փոփոխության և արտակարգ իրավիճակների վերաբերյալ վիճակագրություն ձևավորողների և օգտագործողների համար, որպեսզի կիսեն իրենց փորձը պաշտոնական վիճակագրության զարգացման և երկրի հաշվետվողականության ապահովման հարցերում:

Համաժողովը Հայաստանին հնարավորություն տվեց.

1. ճշգրտել կլիմայի փոփոխությանն ու արտակարգ իրավիճակներին առնչվող պահանջվող վիճակագրական ցուցանիշների համացանկերը, դրանց ստացման և հաշվարկման մեթոդաբանական հարցերը,
2. քննարկել դրանց հրապարակման և հասանելիության ապահովման ձևաչափերը,
3. ապահովել Հայաստանի կլիմայի փոփոխության վիճակագրության բարելավման ճանապարհային քարտեզի բովանդակային հարցերի քննարկումը և դրա հետագա կատարելագործումը:

Համաժողովը նպաստեց ազգային մակարդակում երկրների կլիմայի փոփոխության վիճակագրական ցուցանիշների ուսումնասիրությանը, վերոնշյալ գործընթացներում մարտահրավերների վերհանմանը և հավաքագրման ու վիճակագրության վերաբերյալ երկրների ներկայացուցիչների միջև փորձի փոխանակմանը: Այցելության արդյունքները կօժանդակեն հանրապետությունում բնապահպանական տեղեկատվության ամբողջականացման ու կառավարման կատարելագործմանը:

▪ Նշումներ

Համաժողովին մասնակցում էին ներկայացուցիչներ Հայաստանից, Ավստրիայից, Ադրբեջանից, Բելառուսից, Բրազիլիայից, Կանադայից, Չեխիայից, Ֆինլանդիայից, Ֆրանսիայից, Վրաստանից, Հունգարիայից, Իռլանդիայից, Իտալիայից, Ղազախստանից, Կիրգիզիայից, Լատվիայից, Լիտվայից, Լյուքսեմբուրգից, Մեքսիկայից, Մոնղոլիայից, Հոլանդիայից, Լեհաստանից, Պորտուգալիայից, Մոլդովայից, Ռուսաստանից, Սլովակիայից, Սլովենիայից, Շվեդիայից, Շվեյցարիայից, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունից, Տաջիկստանից, Ուկրաինայից և Ուզբեկստանից:

Համաժողովին ներկա էին նաև ներկայացուցիչներ մի շարք միջազգային կազմակերպություններից՝ ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով, Եվրահանձնաժողովի Կլիմայի գործողության գլխավոր տնօրինություն, Եվրոստատ, Շրջակա միջավայրի Եվրոպական գործակալություն, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն, Միջազգային էներգետիկ գործակալություն, Գլոբալ աշխարհագրական

տեղեկատվության կառավարման քարտուղարություն, ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիա, Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում Միավորված ազգերի կազմակերպության տնտեսական և սոցիալական հանձնաժողով, Արևմտյան Ասիայում Միավորված ազգերի կազմակերպության տնտեսական և սոցիալական հանձնաժողով, ՄԱԿ-ի շրջակա միջավայր, Բնապահպանական տեղեկատվության միասնական համակարգ Արևելյան գործընկերության երկրներում, Միավորված ազգերի կազմակերպության առաքելությունը Կոսովոյում, ՄԱԿ-ի Աղետների ռիսկի նվազեցման գրասենյակ, ՄԱԿ-ի վիճակագրական բաժին, Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպություն, Կոպենհեյկուս կլիմայի փոփոխության ծառայություն, Երկրագնդի դիտորդների խումբ:

Այցելության հետ կապված ծախսերը ֆինանսավորվել են ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից:

«Վիճակագրության պետական
խորհրդի անդամ



Ն. Բաղդասարյան